ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«-----» դեկտեմբերի 2011թ. N----Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԻՍԱԿՅԱՆ ՓՈՂՈՑԻ Հ.22 ՀԱՍՑԵՈՒՄ ԿԱՌՈՒՑՎՈՂ ՇԵՆՔԻ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 13-Ի Հ.299-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ գլխի կանոններով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածով, Երևանի քաղաքի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 23-ի հ.55-Ն որոշմամբ հաստատված ծրագրի 3-րդ կետով և 2010 թվականի նոյեմբերի 26-ի հ.162-Ն որոշման 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին *որոշում է.*

1. Աջափնյակ վարչական շրջանի, Սիսակյան փողոցի հ.22 հասցեում կառուցվող շենքի 5-րդ հարկի հ.14 մեկ սենյականոց բնակարանն անհատույց օտարել (նվիրել) Արկադի Վլասյանին, Գայանե Բաղդասարյանին, Գևորգ Վլասյանին, Մարիամ Վլասյանին։

2. Թույլատրել Երևանի քաղաքապետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված բնակարանի նվիրատվության պայմանագիրը կնքելուց հետո՝ երկամսյա ժամկետում, Աջափնյակ վարչական շրջանի, Սիսակյան փողոցի հ.22 հասցեում կառուցվող շենքի 5-րդ հարկի հ.99 երեք սենյականոց բնակարանը փոխանակել սույն որոշման 1-ին կետում նշված և Արկադի Վլասյանի ընտանիքին նվիրված բնակարանի հետ՝ փոխանակվող բնակարանների նախահաշվային արժեքի տարբերությունը սույն կետում նշված ժամկետում՝ մինչև փոխանակության պայմանագիր կնքելը, վճարելու պայմանով։

3. Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի սեպտեմբերի 13-ի «Երևան քաղաքի Սիսակյան N22 հասցեում կառուցվող շենքի բնակարաններն անհատույց օտարելու մասին» 299-Ա որոշման 2-րդ կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ.

«2. Աջափնյակ վարչական շրջանի, Սիսակյան փողոցի հ.22 հասցեում կառուցվող շենքի 6-րդ հարկի հ.58 երկու սենյականոց բնակարանն անհատույց օտարել (նվիրել) Կարինա

Մելքոնյանին, Աննա Մելքոնյանին, Արտաշես Մելքոնյանին, իսկ 7-րդ հարկի հ.62 մեկ սենյականոց բնակարանն անհատույց օտարել Ալբերտ Մելքոնյանին»:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք – Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԻՍԱԿՅԱՆ ՓՈՂՈՑԻ Հ.22 ՀԱՍՑԵՈՒՄ ԿԱՌՈՒՑՎՈՂ ՇԵՆՔԻ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 13-Ի Հ.299-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Կառավարության 2000 թվականի հոկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության տարածքում /բացառությամբ աղետի գոտու վերականգնման առաջնահերթ ծրագրում ընդգրկված բնակավայրերի/ քանդման ենթակա վթարային բնակելի տների բնակիչների բնակարանային խնդիրները լուծելու մասին» հ.682 որոշմամբ հաստատված ծրագրի համաձայն՝ նախատեսվում է Երևան քաղաքում 2011 թվականին քանդել 4-րդ կարգի վթարային Շինարարների փողոցի հ.15 շենքը ամբողջությամբ:

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2000 թվականի հոկտեմբերի 25-ի հ.682 որոշումը՝ Շինարարների փողոցի հ.15 քանդման ենթակա շենքի 33 բնակարաններից 28-ի վերաբերյալ կայացվել են Երևանի քաղաքապետի որոշումներ պետական միջոցներով կառուցված բնակարաններ հատկացնելու մասին:

Արկադի Վլասյանի ընտանիքի վերաբերյալ անհրաժեշտություն է առաջացել ընդունելու Երևանի ավագանու որոշում, քանի որ վերոհիշյալ ընտանիքի մասով որոշմամբ հաստատված կարգի համաձայն Երևանի քաղաքապետարանի տնօրինությանը փոխանցված պետության միջոցներով կառուցված բնակարանների քանակը և կառուցվածքը հնարավորություն չի տալիս ապահովելու ներքոհիշյալ ընտանիքի վերաբնակեցումը: Ելնելով շենքի շտապ քանդման անհրաժեշտությունից բնակարանների ամրակցումը կատարվում է Երևան համայնքի միջոցներով Սիսակյան փողոցի հ.22 հասցեում կառուցվող բազմաբնակարան շենքից:

1. Շինարարների փողոցի հ.15 շենքի հ.23 մեկ սենյականոց ազատված բնակարանը հետագա քայքայումից պահպանելու համար, Երևանի Աջափնյակ համայնքի «Շ և ՇՇ» ՓԲԸ կողմից 1999 թվականի հունիսի 8-ին տրված կարգադրության համաձայն որպես խորդանոց հատկացվել է Արկադի Վլասյանի ընտանիքին, որը ներկայումս բաղկացած է չորս անձից: Արկադի Վլասյանի ընտանիքը 2000 թվականից փաստացի հաշվառված բնակվել է վերը նշված բնակարանում (հիմք 28.05.2011թ.«Լենինգրադյան 48/1»

համատիրության կողմից տրված հ.130 տեղեկանք)։ Ընտանիքի կազմը՝ Արկադի Վլասյան, Գայանե Բաղդասարյան, Գևորգ Վլասյան, Մարիամ Վլասյան։

Անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 29.09.2009թ. հ.2675975 վկայականի, Հայաստանի Հանրապետության Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի տեղեկատվական կենտրոնի 23.06.2011թ. հ.ՎՄ-2/2307,2308,2311 գրությունների համաձայն Արկադի Վլասյանի, Մարիամ Վլասյանի, Գևորգ Վլասյանի անուններով Երևանի Շինարարների փողոցի հ.15/1 շենքի հ.103 երկու սենյականոց բնակարանի նկատմամբ գրանցված է բաժնային սեփականության իրավունք։ Այդ բնակարանի նկատմաբ գրանցված է նաև Արկադի Վլասյանի եղբոր՝ Արտուր Վլասյանի անվամբ բաժնային սեփականության իրավունքը։ Վերը նշված բնակարանում հաշվառված բնակվում է Արտուր Վլասյանի ընտանիքը չորս անձով։ Գայանե Բաղդասարյանի անվամբ Հայաստանի Հանրապետությունում որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ։

Վլասյանի ընտանիքը դիմել է Երևանի քաղաքապետին իր ընտանիքին հասանելիք մեկ սենյականոց բնակարանի փոխարեն իրենց երեք սենյականոց բնակարան տրամադրելու խնդրանքով՝ պարտավորվելով ավել մակերեսի համար կատարելու վճարում։

2. Սույն որոշման նախագծով նախատեսվում է նաև Երևանի ավագանու 2011 թվականի դեկտեմբերի 23-ի հ.299-Ա որոշման մեջ կատարել փոփոխություն։

Երևանի ավագանու 2011 թվականի դեկտեմբերի 23-ի հ.299-Ա որոշմամբ Աջափնյակ վարչական շրջանի , Սիսակյան փողոցի հ.22 հասցեում կառուցվող շենքի 6-րդ հարկի հ.60 երեք սենյականոց բնակարանն անհատույց օտարվել է Ալբերտ Մելքոնյանին և Կարինա Մելքոնյանի ընտանիքին։

Շինարարների փողոցի հ.15 շենքի հ.28 երեք սենյականոց ազատված բնակարանը հետագա քայքայումից պահպանելու համար, Երևանի Մաշտոցի շրջխորհրդի գործկոմի ԲՏԱ վարչության 26.10.1994թ. հ.19 կարգադրությամբ հատկացվել է շրջանի ՆԳ աշխատակից Ա.Մելքոնյանի ընտանիքի օգտագործմանը որպես խորդանոց։

Վերը նշված բնակարանում 1999 թվականից հաշվառված բնակվում են Ալբերտ Մելքոնյանը, Կարինա Մելքոնյանը, Արտաշես Մելքոնյանը,Աննա Մելքոնյանը (հիմք՝ Մաշտոցի վարչական շրջանի անձնագրային բաժնի կողմից 30.05.2011թ. տրված բնակչության պետական ռեգիստրում հաշվառված լինելու մասին տեղեկանքը)։

Աջափնյակ և Դավթաշեն համայնքների 1-ին ատյանի դատարանի 2006 թվականի սեպտեմբերի 5-ի /գործ հ.2-1382/ վճռի համաձայն Ալբերտ Մելքոնյանը և Կարինա Մելքոնյանը ամուսնալուծվել են: Վճիռը չի բողոքարկվել և ստացել է օրինական ուժ:

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի տեղեկատվական կենտրոնի 13.06.2011թ. հ.ՎՄ-2/2120 և հ.ՎՄ-2/2034 գրությունների համաձայն ընտանիքի անդամների անվամբ Հայաստանի Հանրապետությունում որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ:

Երևան քաղաքի ավագանու 13.09.2011թ. հ.299-Ա որոշմամբ Ալբերտ Մելքոնյանին և Կարինա Մելքոնյանին ընտանիքին անհատույց օտարվել է երեք սենյականոց բնակարան:

Կարինա Մելքոնյանը և Ալբերտ Մելքոնյանը դիմել են Երևանի քաղաքապետին, խնդրելով հաշվի առնելով, որ իրենք երկու տարբեր ընտանիքներ են, հատկացված երեք սենյականոց բնակարանը փոխարինել մեկ և երկու սենյականոց բնակարաններով:

«Երևան քաղաքի Սիսակյան փողոցի հ.22 հասցեում կառուցվող շենքի բնակարանն անհատույց օտարելու և Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի սեպտեմբերի 13-ի հ.299-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 23-ի հ.55-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման ընդունումը պայմանավորված է հարցի կարգավորման անհրաժեշտությամբ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ**

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԻՍԱԿՅԱՆ ՓՈՂՈՑԻ Հ.22 ՀԱՍՑԵՈՒՄ ԿԱՌՈՒՑՎՈՂ ՇԵՆՔԻ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 13-Ի Հ.299-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան քաղաքի Սիսակյան փողոցի հ.22 հասցեում կառուցվող շենքի բնակարանն անհատույց օտարելու և Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի սեպտեմբերի 13-ի հ.299-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԻՍԱԿՅԱՆ ՓՈՂՈՑԻ Հ.22 ՀԱՍՑԵՈՒՄ ԿԱՌՈՒՑՎՈՂ ՇԵՆՔԻ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 13-Ի Հ.299-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան քաղաքի Սիսակյան փողոցի h.22 հասցեում կառուցվող շենքի բնակարանն անհատույց օտարելու և Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի սեպտեմբերի 13-ի h.299-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի էական փոփոխություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ